

9577


Բժ. Ա. Զարզուրեանց



# ԱԴԱԹ ՉԻ

Կոմիլիս  
երկու գործողութեամբ

Զօկ բարբառով



Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս.

Եղիկոսապ. Օր. Ն. Աղանեանի, Պօլից. 7

1912

891.99

2-25

9-35 *WY* Bd. II. Qurqurkawig B

2-35 Bd. U. Qurqurkawig  
Ukunf Wamow

19 NUV 2018.

Ughamf Wauwaway Okan. -  
1918 p. v / 1  
Pbf 44

# ԱՐԱՐ ՀԻ

Կոմիլիս երկու զործողութեամբ 282(5) և

1361



Թ Ի Ց Լ Ի Ս  
Էջմիածնապ. Օր. Ն. Աղոթեանցի, Պօլից. 7  
1912

12 APR 2013

29008

Настоящая пьеса, подъ заглавіем „Не въ обычъ”, соч. Д-ра Ар. Заргарянца, разрѣшено Намѣстникомъ Его Императорскаго Величества на Кавказѣ, для представления на сценахъ (отзывъ Канцелярии за №. 26876) 1910 г. 16 декабря г. Тифлисъ.

И. д. Предсѣдателя Комитета Колобовъ

Секретарь А. Гусевъ.

Այս պիեսի ներկայացնելու իրաւունքը  
վերապահւած է հեղինակին: Իրաւունք խնդրելու  
համար դիմել՝ Տիֆլիս, դ-րу Արիտ. Զարգարյանց:

Բժ. Ա. Զարգ.

## ԹԱՆԿԱԳԻՒՆ ՄԱՅՐԻ ԻՄ

Քե՛զ, միմիայն քե՛զ, քո անհոն սիրոյդ եւ անսասելի բարութեանդ եմ պարտական այն բուռն սիրոյ եւ ջերմ կարօտի համար, որ միշտ վառ են իմ մէջ դէպի իմ ծննդավայրը եւ հայրենակիցներս։ Այո՛, քե՛զ եմ պարտական եւ այն բոլոր քաղցր յիշողութիւններիս համար, որ երկար տարիներից ի վեր, նոյն խակ հեռու օտարութեան մէջ, այնպիսի մեծ թափով այսօր վերականգնում են իմ հոգու ստաջ եւ ոգիորում ինձ։

Քո թանկագին եւ անմոռաց յիշատակին է նիբում իր, թէեւ թոյլ, բայց քեզ հարազատ բարբառով խօսող զրիչը

Քո երախտապարտ որդի ՌՍՑԱՄՐ։

## ՇԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ա արտասանւում է զօկերէնում ինչպէս  
ա' ֆրանսերէն և յօդում  
նւ=ֆրանս. և  
օ=ֆրանս. օ՛

<b>ի</b>	
<b>ը</b>	Կարդալ մի վանկով
<b>ա</b>	ինչպէս յի, յը, յա, յօ.
<b>օ</b>	



# ԱԴԱՐ ԶԻ

Կոմեդիա երկու գործողութեամբ բժ. Ար. Զարգարեանցի

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԱՐԻՕՇԱՅ ԳԵԱԼՈՒԽՍ, մօտ 60 տարեկան,  
կարտուզ է դնում.

ՀԱՆԱԹԵԼ, նրա կինը 45 տարեկան, վրաց-  
նակ տարազով.

ԱԼՄԱԶ, սրանց աղջիկը, 18 տար. թաշկի-  
նակ է կապում.

ՄԿՐՏԻՉ, Գալուստի որդին, 21 տար. ներ-  
սիսեան դպրոցաւարտ.

ԲԱԼԱՍԱՆ ՀԱՔՈՒ, Գալուստի քոյրը, 64  
տար. զօկի հին տարազով.

ԹՄԹԸՍՈՒԻՑ ԲԱՂԻԻ, Ղանաթելի եղբայրը,  
47 տար. կարտուզ է դնում:

ԶԱՔԲՈՒԻՑ ՎԱՐԴԻ, դրացու հարսը, Ալմազի  
ընկերուհին, 18—19 տար. վրացնակ տարազով.

ԼԱԿՐԻՑ ԽՈՒԴԻ, Կախի վաճառական, 53  
տար. «գախկա» է դնում:

ԵՐԻՑ ՊԱԶԾԻ, այգեգործ, կարմիր թաշկի-  
նակ կապած գլխին, ոտարոբիկ, չուխով.

ԱՄԸՐՁՈՒԻՆ, գիւղական ծառայ, 18 տար.  
մորթէ գդակ է դնում.

Գործողութիւնը կատարւում է Ագուլիսում,  
եօթանասնական թւականներին:

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ 1.

Մեծ սենեակ գորգերով ծածկւած, ձախ կողմը  
մեծ թախտ վրան դորգ փուած, մի կողմը փոքրիկ  
դշակ, դիմացի պատի վրայ կախւած են «Ռդի Հայաս-  
տանի» ասելնագործ պատկերը շրջանակի մէջ, բարե-  
կամների մի քանի լուսանկարներ շրջանակներում և  
առանց շրջանակի: Աջ կողմի պատում երկու փոքր  
պահարաններ վարագոյրով ծածկւած, մէջ տեղը դուռ:  
Դիմացի պատին հացի սեղան, առանց սփոռցի, մի  
քանի հին ձեմի փափուկ աթոռներ: Սեղանի գլխին պա-  
տից կախ մի հին ձեմի հայելի: Ալմազը տնային զգես-  
տով աւելում է սենեակը և կարգի է բերում:

## ԵՐԵՒՈՅԹ 1. ԱԼՄԱԶ

ԱԼՄԱԶ (մենակ) Տինամ ըս նօկ մառռած  
նազուկօ շեապը ուրտի ա սազամ, նահամ ըն  
մօրդը Մօսկովից ա բարած: Անքան փուղ օք  
նրուք օնին, Մօսկովից ալ ըն բիրիլ, հալա Տրա-  
պիզունից ալ (հայելու մօս ուղելով թաշկի-  
նակը) ըն, նօկ եղախ հսըրազուն իս ունչ ա-  
հիմ: (զայրացած գլխից հանում է դէն զցում)  
ակնիս գիրուղն ա, գիրուղը... Բաս Աստուած  
վի՞ր ա կալիլ օր նօկ եյկքա հըրսընքումը եղախ  
կապուղը մահ իս ընամ, պուտի ա նել մնահած  
ըմընչթանից գատինը մտամ... Ամա, հւնչ հուզը

տօմ գիլհիս, օր ափիս ըռազի չի, նահամ ա մօրդութ ուռատի նիզիլ ա, անդի ըս նարիլ, թակուզ քըչքակի բուն շինի դրի գիլհիդ, էմ հւնչ պօրտքս ա: Հօ, բաս իս մեխակ չիմ, օր թայի թուշի մօտ սըվիրիս մնծմ (ընկնելով բախտի վերայ սկսում է նեկենալ, դրսից լաւում է ծափի ձայն, կրկնուում է բեմի ետելից):

**ՎԱՐԴԻ.**—Ախչի, Աղմազ, տուն հւհման չի կօ. (մնում է Վարդին մի նամակ ձեռքին):

## ԵՐԵՒՑԹ 2. ԱԼՄԱԶ ԵՒ ՎԱՐԴԻ.

**ՎԱՐԴԻ.**—Ախչի, քըռանամ, ատ ի՞մ ըս լէ-իս. (դէս ու դէն նայելով). ուհման ալ չի կօ ախչի, ունչ կօյ է, դէ վիկօց, լեօման, ծօփ ալ ըմ տալիս, աշս չի կօ, վիկօց, ախչի քռանամ, երլախըդ ի՞մ ըս հանած...

**ԱԼՄ.**—Մնդար մնօ ատի երլախ, ակնիս գիրուղն ա, ախչի, գիդամ չիս է, նոկ հըրսըն-քումը պուտի ա նել մնահած մայսը կոյտ էլի, գատինը մտամ: Սաղ Ըգուլիս Յ պառաւ ախճիկ կօյ—մոյնը իս ըմ, բաս լօմ ունչ:

**ՎԱՐԴԻ.**—Ախճի, գի՞ծ ըս, սարսաղ ըս, վիկօլ երլախըդ կապա. (Տալիս է թաշկինակը). իս օր մա երլախ ըմ նել կապամ զառըս վէր ա նել գելիս, հըրդօ ալ տի՞նամ ըս քաղքի թըհար ըմ գիլուհ կապամ, իմ, ուրիշներից պակաս ըմ, ունչ իրիք, այ բանիտ կօց է:

**ԱԼՄ.**—Քու բունդ ուրիշ ա, դու ըշկօլամը կըրդահած չիս, ըշկօլից դուս ակածներից ուկ ա երլախ կապամ, սաղ Ըգուլիս շօտ ընան իրիք հեզի (սկսում է կապել թաշկինակը եւ նեկեկում է):

**ՎԱՐԴԻ.**—այ հերիք ըս է. սարտըդ օրախ պահա, ախպարըդ ընան սաղ, իզի ան սըհաթը փահիլ ա տօլ... աղուրդ՝ Մկրճիտ ըշտեղ ա, տուն չի:

**ԱԼՄ.**—Զէ, տուն չի, հօկ ա նահալ ա միը հաքուց տուն: Ախիր գիդամ չիս է, հըրտատան տղարքը երլախ կապածի վարան սկի լայադ չին նարամ մտայկ տօն:

**ՎԱՐԴԻ.**—է իմ, միը վարժապեար ընդեղ չի նել, պարուն Արսէնը:

**ԱԼՄ.**—Դու ալ հերիք ըս է, մա Արսէն հա, Արսէն, ախիր օր շեապ ընամ դրէծ, մոյն տօսը ուրիշներն ալ ըն նել մտայկ տօլ, իս ալ ըմընչըթանից ունչ մէյգուն ըմ դուս ակալ, ունչ ալ պօր ըմ ակալ. (Քիչ նեկեկալով):

**ՎԱՐԴԻ.**—Աստուած սայրիս, հերիք ըս, Բախտի բուն չի, մոյն ալ տահանս մա քու ըզահած մօրդու ա դուս ակալ, օր համ շեապ ալ ա գրել գիլհիդ, համ ալ Մօսկով ա տարալ... է մայտըս չի Խաթունօ ախճիկը, մոյն շըբաթամը զըմօշ դայրան սկըցահան, ասկա սըհաթը գիճել վիզը, տարալ Մօսկով: Հալա նօ իս լափ քանիրի ախճիկ ա նել, գի՞զ ունչ ա հըսահած, համ

հարուստի ախճիկ ըստ, համ աղ ուսում առած: Վարժապետը խօ քունըն ա, օր իզիս. ախպուրըդ հիտ մա քիզ ուշի ա նատի դօստ: Աս շըքաթաց քանի հիտ ա ակած ձիր տուն:

**ԱԼՄ.**—Գուլը, գելիս ա, մոյն հիտ ալ լափ շըմքըմաջին ըք ըռաստ ակալ, ձեռք ա բոնել, ըմընչթանից անդի մոյն կըրմրեմ, օր գիդահալ չիմ ունչ ականդոտակ մտամ: Ամա ափուս ճընչելիս չիս, նո վարժապետի ախճիկ ա տօլ, նրոնը կախի եա նուխվա վաճառականներն ըն, համյի չի վարժապետը, ունման մարդու նօ, ատի տղի, վարդահած: լուսաւոր, ամման բուն գիդուդ:

**ՎՐԴ.**—Է իմ, էմ մօրդս օր վարժապետ չի, մա պակաս ա: Ա՛խճի, աղուրդ գիր ըմ բարած օր կարդիս, մոյն տիս ունչ ա գիրում:

**ԱԼՄ.**—Սկի ալ չի պակաս, իմ ա պակաս, ամա լուսաւորւածի տեղը ջուկ ա, տօ տինիմ, ունչ ա գիրում: (վերցնում է նամակը). վիշտավ ա ակած, թա կըրըւանավ:

**ՎՐԴ.**—Ախճի, մկէլ օրաց նոկ լակրից Խուդի ա կախիցը ակած, նօյ ա բարած:

**ԱԼՄ.**—Ատ ուռն ա է լակրից Խուդի, ճընչելիս չիմ:

**ՎՐԴ.**—Նահամ ըն շօտ վախտ ա տօն չի ակած, կըրդօ ակած ա ախճիկ նշանի, նրուց տօնը նոկ Փըրջի կըհաւին մօտ պալկոնաւուր տօնըն ա:

**ԱԼՄ.**—Ակած ա ախճիկ նշանի, ախճի, գի-

դամ չիս, ուսում առած ա, ջո՞հիլ ա, շեմալ ա գրում, թա կարտուզ:

**ՎՐԴ.**—Այ բալամ, իս ըշտեղանց ըմ տահած, օր գիդիմ:

**ԱԼՄ.**—Բաս հոկ գիրը հւկ ա բարալ, օր գիդամ չիս:

**ՎՐԴ.**—(Նստելով): Ախճի, քշարավ մօթամօթ նստէծ ըմ, հըլլերին ըռաչիս գիլուհ ըմ կապամ, մոյն ալ տինիմ, գուրքը պայրկ-պայրկ, վեր ըն թակամ, ալ գիդահալ չիմ եըլախս ուռտի ըմ կապալ, ուռտի չիմ կապալ, մոյն ալ տինիմ թըլընթափած Զարգարից Ըուրստամ ըռաչիս կայնած ա: Այ տղօ, ունչ կօ, խայր ընան. Թա՞ մըշտըլլըս տօ—ահիմ, այ տղօ, ահա տինիմ ունչ ա է, քու էզնա եա ակած, թա խօյրաց Սարգիս, քի՞ չէ, մըշտըլլըս տօ, ետով ահիմ, անա ճօրս ա կտրել, հանամ մոյն արկու շըհանուց ա նել թակալ օկնը, ծացիցը հանալ ա դոկ գիրը: Մայտըդ ա, իս օր քիզ նահամ ըմ նել թա քըչաղակը իրիք օր ա միր ծառին քըչքըչալիս ա, գու մահ տնօզ ըս նել տալիս, հրդօ հօ հըվատիլ ըս, էյ կծիմ, դէ շնւտ արա կըրդահի, շօտ ըմ նիգարան:

**ԱԼՄ.**—Ախճի, անդի փիս թընակավ ա գիրէծ օր ըսկի կըրդւալիս չի (սկսում է կարդար, անվստահ) «1874 ամի փետրվարի 14-ին ի Ղափորովագոյթ մայր իմ թումիզառ և սիրելի կողա-

կից Վարդի Գրիգորեան Զօհրաբեանց։ Նախ քանի շարքս կարճառօտ գրեցիմ վասն միամտութեան կողմանէ լինիք միամիտ։ Եթէ կամենաք մերոյս կողմանէ որպէսութիւն իմանալ, փառք և գոհութիւն Աստուծոյ, մենք սադ սալամաթ ենք և ձեր ջանսաղութիւնը կը ցանկամք ի տեառնէ մերմէ։ ամէն։ Մէկ էլ այս երկու օրըս դուրս են գալիս դէպի տուն, քարվանով Սարդարից Ստեփանը՝ դաշտեցի, Փանից Շմամունը, Եարվելից Ղուգեազը և մեր դուքանի դօնշի Լակը լից Խուդին, Աստուծով բարիկենդանին տեղը կը լինեն։ Դօնշի Խուդու ձեռքով ուղարկեցիմ օյզուն համար փախկի բաֆտայ, մէկ ջուխտ սաղրի քօշար, մէկ հատ դումաշ մանդիլացու, Վարդի համար մէկ շարմահի սանդը մէկ ճըկըտանոց և մէկ շալ դէյրացու, (Վարդին ուրախանում է) տան համար մէկ քայսակ փընդը, շամբալութ և 4 հատ լիմօն... Բարիկենդան է, քէփ կանէք։ Մէկէլ, որ զլիսաւորն է, դօնշի Խուդին գալիս է տեղդ... ախճիկ ուզելու մտքով, թէ կարողանայիք մեր դօնշի Գալուստից Ալմազին տայիք... նրան...»

Վահ, աս ունչ ա գիրում է, գիծ ա (դադարում է):

ՎՐԴ.՝ Իմ ա գիծ, կըրդահի, կըրդահի, տինիք:

ԱԼՄ.՝ (շարունակելով). «Գալուստից Ալմա-

զին տայիք նրան, լաւ կը լինէր... հարուստ է»... Վէ, վէ հոկ մօրդը լափ գիծվեծ ա:

ՎՐԴ.՝ Հը, նուր ա, տահնաս, օր ահամ, դօկ ալ քիզ մօրդ, դօկ ալ քու շեապըդ (ուրախանալով) հը, հըրդօ քըչըդակին հըւատիլ ըստ

ԱԼՄ.՝ Ա'խճի, սուս է, ամութ ա է, մոյնը լաիլ ա:

ՎՐԴ.՝ Կըծիմ դատի մօրդ, տինամ ըստ, քիզ հատի ալ ա մտածամ, ետօվ, ետօվ, այ դէ մոյն կարքին կըրդահի է։

ԱԼՄ.՝ Դէ ալ ունչ կարդիմ, պըրծել ա Շնարցանողաց շատ բարով կանէք, ևս առաւել խնամիներին, հերբար թումանին և քեռի Մինասին. մնամ ձեր խոնարհ որդի թումաս Հայրապետեան Զաքարեանց»։

ՎՐԴ.՝ Եյ կըծիմ է, տօ, տօ, մոյն գիրն ալ պաշիմ, տինամ ըստ ուռոտի մօրդ ա, կըծիմ հատի մօրդ է (համբաւելով նամակը բռչկուսում է):

ԱԼՄ.՝ Եյ Վարդի, բաս ըշտեղանց եիմանիք ատ տղին հատի։

ՎՐԴ.՝ Կայսի, իս էմ սկսւանը հըրցանիլ ըմ, երմանիլ... քըռանամ, երտահնամ, հըրդօ սկասալը սասը գիճիլ ա նի, նօմ (դուրս է գընում):

### ԵՐԵՒՈՅԹ 3. ԱԼՄԱԶ.

**ԱԼՄ.**—(մենակ). Իս էմ Աստուածս, բախտաւոր ա դոկ Վարդի. Եթիմ ընաց, դատի քախտաւոր. եարաք Աստուած, տինիս հւոտի մօրդ ա ատ Խուդին, քջը, բուսաթը, հագուստը: Ո՞ւնչ նիզամ ա նա, թաքի կըրդահած ընա, կըրդահածները կնանաց դադիրը ուրիշ թահար ըն գիդամ է... Իլաքիմ նոկ Սիրիփանաց Սումբաթ; Մոսկով ա կըրդահած, իս էմ Աստուածս, բախտաւոր ա նրօ կնայկը. գիդամ չիմ. ամա էսձ թւում ա, օր պարուն Արմէն ալ ա ատի նիլ... (յիշելով) պույ հնաւղը գիհիս, հրդօ օյզիս գիւլ այ իս հալա կուվը կթեծ չիմ, շնուտ... արիմ նօմ (դուրս է գալիս):

### ԵՐԵՒՈՅԹ 4. ՀԱՆԱԹԵԼ

**ՀԱՆԱԹԵԼ.**—(մտնում է՝ չարսալով). Մառնիմ նրօ զօրութեանը, թա արազըս կատարւար ա, սև էռծանկը խօստահած ըմ, մատամ ա մատադ արիմ (վերցնելով չարսալը նայում է շուրջը): Հնկ աս ունչ ա, օթախը հալա հնկ հալամըս ա, սմաւուր ալ չի կօ, ախճի, Ալմազ, Ալմազ, շտեղը ըս է, (որոնում է) ուխման չի կօ: Ալմազ, Մըկրծիս, ըշտեղ ըք... ուխման չի կօ: Բալքան նահած ա կուվը կթի (նայելով դէպի

բակը). Ալմազի Ալմազ... հենէ սասը թօվիլ փրահիցն ա գելիս... (Ես դառնալով նայում է սեղանին) ունչ սուփրա կօ, ունչ պօտնուց, տինամ ըս, օրըս հոկ վախտն ա, հալա հոկ օրամըս ա միր ախճիկը, ալ տինիք ուռ եանշաղն ա ակած ըխճըկուս աւրօ արած (մտնում է Ալմազը):

### ԵՐԵՒՈՅԹ 5. ՆՈՅՆԸ ԵՒ ԱԼՄԱԶԸ

**ԱԼՄ.**—Պոյ, օյզի, Էրբիյ ըս ակալ:

**ՀԱՆ.**—Ալմազի, ըշտեղ ըս, կանչամ ըմ, կանչամ, սաս տվուղ չի կօ:

**ԱԼՄ.**—Մա սասըդ լսեմ՝ ակամ:

**ՀԱՆ.**—Մկրծիտ ըշտեղ ա, հալա քուն ա:

**ԱԼՄ.**—Չէ, քուն չի, նուր ա դուս ակալ:

**ՀԱՆ.**—Քըռանամ, ըշտեղ ա նահալ, ան ալ ըունց չայի:

**ԱԼՄ.**—Նահալ ա բակասան հաքուց տուն, ահալ ա եըրկեց հաքուն շոտ ա հալքահալ արած օր նօմ, ահալ ա չայի սպասիք ունչ:

**ՀԱՆ.**—Ալմազի, հալա կայնած ըս, շուտ արաէ, հըրդը հաւաք արա, տօնը տեղդ սարքաւ:

**ԱԼՄ.**—(կարգի բերելով). Էյ կծիմ օյզի, նըղանիս ունչ, դօնչից Վառդի ա նել ակած, պուտի երտահամ, նահած կուվը կըթիմ, ան ալ առթուկն ա բրախ ակած ծըծեծ: Գիդամ չիմ, ունչ հուղը տօմ գիհիս:

ԴԱՆ.—ԽԵՇԿԻՄ ունչ, բալամ. բաս հօրըդ իս  
ունչ ջըղօք տօմ, բաս դօկ օյին ա, օր բարաս  
գիլուհը... Իլլահիմ ան լաշառը, ան լաշառը,  
նօ իմ ա նել ակած:

ԱԼՄ.—Մարդիցը գիր ա նել ակած, բարած  
ա նել օր կարդիմ:

ԴԱՆ.—Շօտ դալաթ ա նել արած, տուն ջօ-  
հիլ տղօ էլած տեղը, նօ նո՞ւր ա հըմըրծակ-  
ւամ միր շումքը ուտնը գրում, ըմընչելիս չի.  
ան ալ տիս ունչ վախար գիլամ ա, քշարավ  
մօթամօթ, օր ունչ իս ընամ տուն, ունչ ալ քու  
ափի, է հուղը նրօ լըպրզառւէծ գիլհին. (Զանգ  
է անում դէպի դուռը):

ԱԼՄ.—Օյզի ջան, մեխևլ չի, ի՞մ ըս անիծք  
տալիս. եթիմ ախճիկ ա, գելիս ա, գու, եանի  
միզ վսաս ա տալիս:

ԴԱՆ.—(նստելով թախտի վրայ). շօտ, շօտ  
դալաթ ա նարամ: Նո՞ր ա նօկ դուկըս, մոյն  
բիր տինիմ... Մեղաւորը սկասարն ա, օր լոխ-  
տան բրախ ա պահամ, (Ալմազը բերում է դու-  
կը). Սըմաւուրդ ունչ հալի ա, նօկ չարսաւն ալ  
վիկօլ նըտեղուց (Ալմազը վերցնում է եւ դուրս  
զալիս):

### ԵՐԵՒՈՅԹ 6. ԴԱՆԱԹԵԼ.

ԴԱՆ.—(մինակ). Եարաբ, հօկ պըրկինդանիս  
ըխճկուս բախտը բօց ա ըլելաց, օր մոյն ալ

մըտաղավ գում քու ուտնըդ... անջախ մա նօկ  
վարժապեսն ա մաշտեղ ընդիէծ: Մկրճիտ ալ  
մա ամման օր գիծում ա եխակը բիրամ տօն,  
ահիս մաթօն ա, դէ նո՞ւր արիս ըրխօյ ա սըր-  
տին հւրտի կըպիս: Ամա հայրը ունչ լսի, բալամ,  
սաղ տօնը տօկ ու գիհլու ա նարիլ: Նօ վարժա-  
պետի ախճիկ ա տօլ (մանելով), նրօ ըզահածը  
սովդաքարն ա, սովդաքարը, ատ ալ ըշտեղանց  
գիդանիք, խեղճ ըրխիս եաշն ալ եինց ա կալիս:  
(լսում է Գալուսի ձայնը):

(Կանչում է Գալուսը) ԱՌ կընայի այ ախ-  
ճի, ըշտեղ ըք:

ԵՐԵՒՈՅԹ 7. ՆՈՅՆԸ, ԳԱԼՈՒՍՏԸ, ԱԼՄԱԶԸ եկ  
ՍՐՄԸՀՐՉՈՒՆԸ

(Գալուսը մտնում է մէկ ձեռքին զամբիւ-  
դը, միւս ձեռքին 4 վառիկ. կինը եւ աղջիկը  
դիմաւորում են, ծառան ետելից):

ԴԱՆ. ԱՌ տղօ Ամրջուն, իյկ հօկ ճուճարը  
ճարքիցըս հինք օռ (տալիս է ծառային):

ԱՄՐՁ.—ԱՌար տանիմ, մարթիմ, զօնաղ ա  
գելաց:

ԴԱՆ.—Զէ, ախմախ. ախճի Ալմազ, դու ալ  
մկրօտը վիկօլ, տնահիք թաւարը կտրտահիք,—  
կայնի տիս ունչ ըմ նահամ—գիծահիք դրմընա-  
նուցը, թա չէ պըրկինդան վախտ ա, ճուճի մուշ-

տաղրին շօտ ա նիլ, մույն ալ տահաս ծըպպըցահան...

**Ա.Մ.**—(մօտենում է պտօհանին) Նոր ա մըկրօտը, վիկալիմ նօք:

**Ա.Մ.Բ.**—Ապար, օր միր մույն ճռւճը կըօնի, դօնշիներից հայնգը բռնիլ ըմ բիրիլ տեղը, սկի վախիման:

**ԳԱԼ.**—Յիմար, յիմար դուս մատօլ, ախմախ, շուտ արա, պրծէ, օր նոկ դահան ալ տանիս քօշ օրտը, խեղճ հէյվունը մթանաց դէսն ա դուզնը բռնչալիս ա, դէհա շուտ:

**Ա.Մ.Բ.**—Հոկ սըհաթիս ապար, ամա ատ անիծւած դանան անդի խրթնուղն ա օր... (դուրս են գնում):

**ԳԱԼ.**—(բարկանալով) — Սա՛սըդ. — Կր'օհի:

### ԵՐԵՒԹՅԹ 8. ԳԱԼՈՒՍՏ ԵՒ ՂԱՆԱԹԵԼԸ

**ԳԱԼ.**—(Բերած բաները դնում է քախտի վըրան, ինքն էլ ծալապատիկ նոտում). Այ կնայկ, իկ տիս, նուր ա, հծվան ըս.

**ՂԱՆ.**—(բերելով թաբախը եւ դանակը, զամբիւդից հանում է միսը եւ զննում). Հոկ սարդն կըլլըկացու ա:

**ԳԱԼ.**—Իս ալ մա կըլլըկացու ըմ առած (առելով կնոջ ձեռիցը մոխ կտորը) Ըհ՛ը, հոկ կըլոլակըդ, հոկ խրռովածը, հոկ չող տեղան ալ կճռւճխըրոված ա դառնիլ:

**ՂԱՆ.**—Այ հւնչ քան ա է:

**ԳԱԼ.**—Չուրք գիրվանքան մոյն չէթվէո, շօտը առալ, ահամ բալքան մնահան հացի ալ:

**ՂԱՆ.**—Ատ հւկքար ըն ակուղները է: Չուրք գիրվանքավ նիգան ըս զօնախլըդ ալ ընաս արած, էհ, (նեղանալով) քու խասիաթըդ ալ է, սկի հազըս չի ակալ:

**ԳԱԼ.**—Պհւյ, պհւյ, այ կնայկ, ալ գիրվես, և գիրվանքան մոյն չէթվէո էխճարը, քիզ պրտտի ա, բարսեղաց Ակուփ շ գիրւանքայ ա նառամ Հ<sup>1/2</sup>, բաս նրուք ուրտի ըն եօլա նելիս, տօնը լի քուլֆաթ; ամման բուն ալ մա բոլ բոլ, կնայկն ա նրո քէյվանի, կնայկլ:

**ՂԱՆ.**—(նեղացած նրում է մսի թարախը, վեր կենում) Տօր, էնձ ըսկի պայտի չի, տօր բալքան բարսեղաց քէյվանին շինի քու ըզահածըդդ, իս բուն չօնիմ:

**ԳԱԼ.**—Այ, դէ աղջիյկ է, խօշտաբութիւնը դիդամ չիս:

**ՂԱՆ.**—Օր աղքան հօվան ըս նել ատ քէյվանուն, ի՞մ ըք նել հօրըս եախիցը նատի պայրկ կըպեծ:

**ԳԱԼ.**—Դէ հերիք ըս է, փիեան, զառափաթ ա նարամ ըմ, աս ունչ թըհար ուխմնատիք ըն էլած հոկ կնանիքը, փիեա:

**ՂԱՆ.**—Զառափաթը նօ բզարամը քու թայը թուշիդ հիտ արա, իս սայրամ չիմ:

ԳԱԼ.—Դէ օր սայրամ չիս, լսէ տիս ունչ ըմ նահամ, գի՞դամ ըս ունչ կօ:

ՂԱՆ.—Չէ, ունչ կօ, բըզարից ակուղը դու ըս, էնձ ըս հըրցանամ, ունչ կօ:

ԳԱԼ.—Բաս սարտըդ ալ սկի քիզ էհման չի նահամ, բաս նահամ չիս աս ունչ խըբէր ա, մօրդըս իմ ա հօկքան մայս առած ասար, սուխարի առած... նօկ չօթին ալ բիր, նծը ա նօկ ախճիկը:

ՂԱՆ.—Դու ընան քու Աստուածը մտքատոկ մա գիծիլ էնձ, չօթքը բիրիլ ըմ, դու ահա տինիմ ունչ կօ (բերում է չօթիը) դու ալ օր մոյն արկու շօհու էհման առիս, մատիլ ա չօթկավ հրսէք արիս:

ԳԱԼ.—(Վերցնելով չօթիը) ԱՌկու շօհի, սարուն արկու շօհի ա, (զցում է չօթի վրայ) հօկ մա 4 ճուճրդ քիզ նարամ ա իրիյք արօսի, 4½ գիր. մայսը 8 կապէկավ նարիլ ա 6 շօհի 4 կոպ. (զցում է) ½ գիրվանքայ չայի սուխարի—18 կապ. (զցում է) հօկ արօսին, արկու կապէկը կօյ ունչ:

ՂԱՆ.—Այ մօրդ, դէ փուրլս փթել ա, դէ ահայ է:

ԳԱԼ.—Դէ համփերա դու ալ է (մտածելով) ետով, դօկ արալ ա 1 մ. 12... մնահմծը... (մտածելով) Բարխուղարաց դուքանիցը նահամ ջանից տղին մօտ, ընդեղ էխման չիմ առալ,

ընդեղանց հօ նահամ Ղասումօ մօտ 8 կոպէկի ալ դարչին ըմ առալ, դօլմի վարա սարուն ա նիլ, (զցում է) հօկ ալ 8 կոպէկը...: Հօ, 10 կապէկի ալ բօմբի հոցն ա, ամա շուն տղան դալր ա քըլում, ալ նրօ հանից էխման չիմ ըլելաց, (զցում է) հօկ ալ 10 կապէկը, բաս արկու կապէկը ըշտեղ ա մնահալ, ընչիյ ըմ մատիլ տվէծ, ալ անդի էխման չիմ առած:

ՂԱՆ.—(Քանիդելով չօթի զցածը վերցնեում է տանում) Այ հերիք ըս է, հըրդօ մոյն ամիս ալ ընդընելաց ըս ատ արկու կապէկի եատկին, անա մույնին տվեծ ըս նիլ էլի:

ԳԱԼ.—Եաւաշ, ատ ունչ բանի ըս է, բիր տինիմ, մատիլ ա ջամը դաֆտար գիծիմ, (Վերցնեում է տեսրը եւ գրում է) ջամը նարամ ա 1 մանէթ 32 կապ. ամա արկու կապէկը ունչ ա էլալ: (Մտածում է) Հօ, ախիր բըզարից առաջ չէ օր ժում ըմ նահալ, արկու կապէկը խըչիմբիր ըմ գիծել, հրդօ օր գրուստ ա, (գրում է) փետրվարի 22-ին տան ային—օյին խարջ 1 մ. 34 կապ. Դէ քու հօրն ըղօրմի, վիկօլ տօր, օր ահիմ քիզ ունչ կօ:

ՂԱՆ.—Դէ նահամ ըս, շուտ ահա, համբերութիմս կտրւել ա:

ԳԱԼ.—Բաս նահամ ըս աղըրդանա գիդամ չիս էլի, հօ, ան ըս նել նահամ, նահիլ ըս, նահիլ չիս նօկ լակորից Խուդի ա ակած մըկէլօրաց

Կախիցը, (կամաց) նահամ ըն ակած ա փսակւի:  
ՂԱՆ.—Ետով:

ԳԱԼ.—Դէ ալ ունչ ետով, հրդօ ալ չիս գիլլուն ընդանամ, աղուրդ ըն ահած օր կնդուն մօզը ձիգ անիլ՝ խիլքը կօրճ, դէ շուտ ըրանիք, հանոււք հրդը հաւաք ըրանիք, նծը ա Ալմազ, սարդուն չայի թաղրաք տանիք, օր ըշտեղ օր ընան շուտավ գիւլ ըն, դոկ սուխարին ալ սան դուն դարսիլ ըք օր նըրվօ:

ՂԱՆ.—Ատ հւկքար ըն ակուղները; այ մօրդ, դու ալ խօսք ըս նահամ, անդի ահա, օր բուն հասկանիք:

ԳԱԼ.—Լակոփից Խուդի, հասկանամ ըս, Լակոփից Խուդի; քու ախպուր Բաղդի հիտ ըն նել բըզարամը, ախպուրըդ մոյն եան ըմ կանչալ հալբահալ արալ օր նրօ բիրի միր տուն, նրուք նուխվայ աշնաք ըն, հասկանամ ըս, չէ, հրդօ նօ թաղրաքըդ տիս, տինիք ախպարդ բարաքալլայ ա, գենարամ ա մոյն բուն շինի, թա չէ:

ՂԱՆ.—Էյ կրծիմ, դոկ խօ մահ էմ տանած արագըս ա օր կատարւամ ա: Մա դու ըս անհաւատ, օր ըրազին հըվըտելիս չիս: Այ Սուրբ Օվանէս, քու ըտնըտակիդ մատաղ, ահտըս օր լսես, հօգուց մօթամօթ էոծակը քիզ մատաղ:

ԳԱԼ.—Ատ հւնչ արագ ա, հւնչ էոծակ ա, ատ նո՞ւր ա օր մինչնա հրդօ տօսսը հիտ զահնալս տարած չիս քու ըրազավըտ:

ՂԱՆ.—Դէ, հւնչ ահիմ, գիդամ ըմ օր տնօգը ըս տալաց, դէ հրդօ ալ մա հըւատիլ, մրազըս չի—հւնչ ա, ան ալ իրիք հիտ իւրուր վարա, մաննիմ նրօ սուրբ զօրութեանը, իրիք քըշիր ա ըրազի տինամ ըմ մահ ա սուրփ Օվանէսը ձիով ակած ա մեր հայթը, Ալմազայ ա կանչամ, մոյն ալ տիննիմ կըռահալ ա խուրջինիցը մոյն կարմիր խնձուր հանալ, մաշտեղիցը ճութ արալ, կէսը տւել Ալմազա, կէսը ինքը կարան, բան դոկ մրազըս չի օր կատարւամ ա:

ԳԱԼ.—Այ ախմախ, ձիով շօռ ակուղը սուրփ Սարգիսն ա է, սուրբ Օվանէսը չի... ետով:

ՂԱՆ.—Ետով ալ ունչ ետով, իս ալ վիր ըմ կահալ մօթամօթ վեզ տւել նրօ շումքը համփերալ, շամ վառալ, հայաթամըն ալ քօր գիձել, թուղ արալ ակալ, հօկա տօն ըմ մտել, օր դու ալ ակաս:

ԳԱԼ.—Քնըրդ ունչ ա ահալ:

ՂԱՆ.—Ըոջի գիձելավըս ճընապար ա ակալ, արկումնինը խօչ, վերչինը լափ կորճ ճընապար, վանան խօ դօւ մա նահիլ մա ըստեղ ա էլած: Հը: նո՞ւր ըս, հրդօ ալ չիս հըւատիլ:

ԳԱԼ.—Հըւատիլ ըմ, իրոր մինչընա վերչը մա դատի բարին կատարի... Դէ աղիկ, արազըդ հալա դրադ դրէ, շուտ ըրանիք, հրդօ գուլ ըն: (ոտի ձայն):

ՂԱՆ.—Պույ, հնւղը գիլհիս, մա հէնէ գելիս

զն։ ըստասամ ա գելիս (սկսում է փոքր ինչ հաւաքել)։

**ԳԱԼ.**—Վնաս չօնի, թա նրուգը ընան, տանիլ ըմ քօխչան շոռ նածիլ մինչնա ձիր հրդբհաւագ նարիլլ։

### ԵՐԵՒՈՅԹ 9. ՆՈՅՆԸ ԵՒ ԱԼՄԱԶԾԸ

(Մտնում է Ալմազը կուժը ուսին եւ դնում է անկիւնումբ)։

**ՂԱՆ.**—Ախչի, դո՞ւյ ըս, սարաըս դուղ ա ընգել, դէ շուտարա, թօզա սուփրահանա սանդոիցը, տիս նոկ գըլղանդիցն ալ հանա մաղի հպատի, շարաբըդ ալ հալա դօկ հալամըն ա, դէ թուղ, թուղ, իս նարիլ ըմ, դու նօ շուր ու շնուրքըդ մոյն դրզցնուր։

**ԱԼՄ.**—Այ ատ ունչ կօ է, ուհման ա գիեւաց։

**ՂԱՆ.**—Հօ, դօնաղ ա գիելաց չայի, նօ շուտ արա շոլ դայրատ ըսկանի, դմօշ երլախըդ կանպա։

**ԳԱԼ.** Նօ բալաս, նօ, հեսէ ըշտեղ օր ընան դուկ ըն։ աղիկ չի դատի տինին։

**ՂԱՆ.**—Նօք, բալաս, նօք մոյնտեղ, ըրելու շոտ բան կօ (դուրս են գնում)։

**ԳԱԼ.**—(Վեր է կենում դուրս գալու) իս ալ մոյն տինիմ նոկ ջերուն խուտ ըն տվեծ թա չէ, մինչնա նրուց գուլին ալ եիտ ըմ դառնիլ։

### ՎԱՐԱԳՈՅԹ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ॥

### ԵՐԵՒՈՅԹ 1. ԳԱԼՈՒՍԾԸ ԵՒ ՂԱՆԱԹԵԼԸ

**ՂԱՆ.**—Ունչ ըն էլալ, այ մօրդ, օրը ճօշկ ա կտրել, ակալ չին։

**ԳԱԼ.**—Դի՞դամ ըմ, հւկ ա գիդամ, ճընըպարի ալ ուկ ա չոլ էլած տարած եիրաց տուն, ամա Բաղդի ալ ա հիտը, գուլ անել խըրէր բերիլ (լրսում է ունածայն) հենէ ական... ական։

### ԵՐԵՒՈՅԹ 2. ՆՐԱՆՔ ԵՒ ՄԿՐՏԻՉԸ

**ՂԱՆ.**—(Մտնում է Մկրտիչ, Ղանաթել առաջ գնալով նանդիպում է Մկրտիչին)։ Այ կըծիմ է, դո՞ւյ ըս, բալաս, սրտաճաք ըս արալ է։

**ՄԿՐՏ.**—Հը, խայր ընայ, ունչ կօ, բարի լուս ափի, բարև օյզի, (նստելով սեղանին) հալա չայ չիք խմէծ. օր տիմնիս նել Բալասան հաքուն ուրիտի չայ ա նել պատրաստած, քէֆդ գուլ ա նել, ալ էղավ, ալ հրեշակ, թօզա էղ, վերջամն ալ կայնած ա թա անըս օր մատամ ա մոյն մաթա ա զանձու արիմ, օր օտիս... Այ հաքու, հերիք ա կէշտ ըմ, չէ օր չէ, մատամ ա շինիմ, ունչ ըս նահիլ, զօռավ ըտրցահալ ա էլի (նայելով ժամացոյցին) պահ հալա քշարվան սհաթի այնն ա,

փուրը լիքը տրխկալիս ա, մօրդ ըս իկ դըմահի,  
հալա ուվ ա գիդամ, մինչնա ճօշք մոյն չուրք  
տեղ ալ դափայ ըն խըմըցանիլ...

**ԴԱՆ.**—Այ զուզի, տեղիս աղաթը ատի ա  
է, նուր ըս նել գիդամ: Պըրկինդան վախտ ա,  
օյզին ընան հաքուքը, եա խօյլաքը օր աղաձնւ  
չի ըտրցանին, բաս ուվ ա ըտրցնելաց, զանքուճ  
ալ չօնիս, օր նօյ ալ ըտրցանի:

**ՄԿՐԾ.**—(Վերցնելով սելանից ֆիւմից) աս  
ունչ սարքն չամուչ ա, աղնւրդ աս ունչ դօնա-  
դի թաղրաք ա, ում ըք ըսպասամ, օյզի:

**ԴԱՆ.**—Լակրից Խուզի ընան, քու քառի ըն  
գելաց, ափիդ բըզարամը տանած ա կանչած:

**ՄԿՐԾ.**—Հօ, նոկ հըլաւուր ըրըլվաղին, օր  
նահամ ըն կախիցը ակած ա վասակւի, հաքուն ալ  
ա նել ասրի նահամ նրօ հատի, աղիկ, Լակրից  
Խուզի ուվ, միք ուվ, լսէծ չիմ օր նօ միզ բա-  
րեկամ ընայ:

**ԳԱԼ.**—(Տէրողորմեան զցելով) Էլած չի, բալ-  
քա դառոալ ա:

**ՄԿՐԾ.**—Նօ, միր բարեկամը, Աստուած ունչ  
արի:

**ԳԱԼ.**—Է, իմ, ունչն ա պակաս, խիլըը,  
թա փուզը:

**ՄԿՐԾ.**—Գիդամ չիմ, փուզը շօտ ա թա չէ,  
ամա եացը շօտ ա շօտ, պօպուս թայըն ա:

**ԳԱԼ.**—Եաշին հիտ ունչ բուն օնիս, այ տղօ,

դու մարդին գործը տիս, աչողութիւնը տիս,  
նստիլ վիկոլը, կարողութիւնը տիս... Եաշը...  
նըտեղ 70—80 տըրականներն ըն փսակվամ ջօր  
հիլ ըխճըկերաց վարան, քիզ հատի 45 տըրա-  
կանը պառաւ ա...

**ՄԿՐԾ.**—Ներողութիւն, ափի, ըսկի ալ չի  
45, 50-ից ալ իւկի ա, հօկ սըհաթիս հաքուց տուն  
հաշվաք, դուս ակալ 53 տըրական:

**ԳԱԼ.**—Է՞հ, գիծիք մա 50 տըրական, միր  
Ալմազ ալ մահ ըս գիդամ շօտ ա պըտիկ—17-ը  
թըրմմէծ ա մտէծ 18-ը:

**ՄԿՐԾ.**—Զէ, չէ, ափի, ատուր ըսկի իս հա-  
մաձայն չիմ, ախիր մօրդ վիր ա կալիլ եիւրան  
ձաքազ եիւրան հալալ 17 տըրական ըխճըկուն տու  
53 տըրական հլաւուր մարդի, չէ, ատ կարելի  
չի, ախիր, ափի, դու քաղաքամ էլած ըս, Թիֆ-  
լիզ տահած ըս օր ախճիկը մինչնա 23—25 տը-  
րական չի դառնամ, մարդու չին տալիս:

**ԴԱՆ.**—Պույ, քոանամ, բալաս, ախճիկը օր  
23 տըրական դառնի, ալ նրօ ջօհիլ տղօ ա մը-  
տըրականիլ, նօմ տենիմ Ալմազըս ունչ հալի ա  
(դուրս է գնում):

### ԵՐԵՒՈՅՑԹ Յ. ՄԿՐՏԻՉԸ ԵՒ ԳԱԼՈՒՍՏԸ

**ՄԿՐԾ.**—(մօր ետեւից) Շօտ սարքն ալ մը-  
տըրականիլ ըն, իմ չեն մըտըրականիլ: Ախճիկը տա-

Նուղը մտայկ ա տալիս նրո արժանաւորութիւններին, խոհեմութեանը, համեստութեանը, տընտեսութեանը, գեղեցկութեանը, վերջապէս ըխճկու ծնողներին, բարեկամներին, մոյն խասկավօջաղին։ Այ, մօրդ ըք նիզամ հենէ մարթավարի մօրդ, ջօհիլ, խելաք, լուսաւոր, աշխատասէր։ Մըտրկանիլ չի, իմ չի մըտրկանիլ, խեղճ քոյրս հաղա ունչ եաց օնի, ըրխոյ ա։

**ԳԱԼ.**—Ատ ուվա է, ուվ, օր ատքան գեավամ ըս։

**ՄԿՐԾ.**—Ուվ, այ, Արսէն վարժապետը, նրո հանից ալ…

**ԳԱԼ.**—(Քրիջալով) Հա, հա, հա, վարժապետը, սպառն մօրդ, … հա, հա…… իս ալ ահիմ ուվ ա։ Այ տղօ, գի՞ժ ըս, մօրդ ալ վարժապետի ախճիկ ա տօլ, աղուրդ ըն ահած օր թօզա հաւար ըն դուս ակած ըրծաթա ձկանք ըն նածամ։ տահած չիք նել օր սովորապարի ախճիկը վիկալին տօն տկլուր վարժապետի։

**ՄԿՐԾ.**—Ախիր իմ է։

**ԳԱԼ.**—Անդի, միզանամ աղաթ չի։

**ՄԿՐԾ.**—Դուք ալ մա ունչ օր ընան աղաթ թափ ըք չափամ, ջօհիլ ըրխին վիր ըք կալամ տալիս մոյն հըլլվարի, ունչ ա թա մոյն աղկու շօհի փուղ օնի, նահամ ըք աղաթ ա, ջօհիլ տղան իրաւունք չօնի ըխճկու, կամ հարսի հիտ խուսի աղաթ չի, ըխճըկուն մարդու տալիս հըր-

ցանիլ չիք, այ ախճի, այ որթի, այ հէյվրան, նիզամ ըս նօկ մարդին, թա չէ աղաթ չիք Գիդիլ չիս տուն հօրսը սկզւառւը ընան տղը մարդկաց կըշտին մատիլ ա լապիկ ընայ աղաթ ա, վէ, ախիր ուն մոյնը ահիմ է, ախիր ունչ բուն ա աղաթը է, աղաթըս ոււն ա։ Վօրդ մատիլ ա եիրան խելքավը, բուն բռնի կսի գիտութեանը, տրամաբանութեանը, եիրան առողջ գատողութեանը, վերջապէս եիրան սըրտին, խղճին, ոչ թէ ամման մոյն հայն, փթէծ սովորութեանը, անմիտ աղաթին, օր դուք կատարամ ըք, ինքներդ ալ չիք գիդամ ընչու, աշխիր դատի բուն ա նիլ, ուհման ալ դոկքան տեղ եիրան խելքը կըշմնիլ ա, չէ, ափի, իս ըստեղ գաղըլ չիմ մնօլ, իս գաղըլ չիմ տինիլ օր ծնողքը բիրին իրաց հալալ ըրխին բախտը, ջօհիլ կեանքը, խըլլըրցանին, պատիւը ըտնատակ գիճին, ցէխամը կըհկըհատին, և ան ալ անդուր ուջի, օր աղաթ ա, կամ աղաթ չի, խեղճ էմ քոյր, էմ սիրելի Սլմազ, քու բախդրտ դծկ աէլի։ Իս ըսկի ըռազի չիմ, առանց էնձ ունչ նիզամ ըք ըրանիք, դուք ըք գիդամ (դուրս է զընում)։

#### ԵՐԵՒՈՅԹ 4. ԳԱԼՈՒՍՏԸ, ՑԵՏՈՑ ՂԱՆԱԹԵԼ

**ԳԱԼ.**—(Մենակ ձեռքը դէս ու դէն անելով) Փահա՛ փահա՛, հոկ՝ ա էլի հըրտատան մեր ու-

ոռւմ առածի խիթը։ Ափսոնւս, ափսոնկամեր փուղար, օր ձիգ նմունների. վարաց ըք խարջամ... Եխիր Սարխոշաց Գալուստ ըշտեղ, Թիֆլիզի Ներսէսեանց շկոլը ըշտեղ, իս էմ Աստուածս, մա հախըսաւ։ Ախիր էնձ ուվ. ա. նահամ նել օր ատի դաշտ արիմ է։ Սովորաքար ըս, տղիտ ալ սովորաքարութիւն սվըրցնւը, Նուխի ըղարկա, Կախը ըղարկա օր մօրդ դուս գու, նօ՞ր ըս ըղարկամ նոկ քանդւած Թիֆլիզը, ան ալ ուսում ըռելի, օր ասար քիզ ալ հօվան չի կօ և դասի ալ օյին բիրի գիլիդ։ Տահաք, գիլիդ հւնչ ա ակալ, այ կնայի, Ղանաթել, ըշտեղ ըս։

**ԴԱՆ.**—(Իուս գալով մէկ դռնից առաջ զընում է դէպի այն դռւոր, որտեղից դուքս եկաւ Մկրտիչը) Աս իմ ըս կըզնըվէծ այ մօրդ, ըրխաս նծր ա, նծր ա նահալ (լալով) քու մայր քուանայ, բալաս, նծր ըս նահալ, ծյզիտ մառնի, հրդօ իս հւնչ հուղը տօմ գիլիդ, (դառնալով դէպի Գալուստը) ատ հւնչ ճոճդայք ա նել, իմ ըս հոկ այզիզ օրարը ըրխիս սարտը մանդրամ, քու խասիաթըդ ալ Աստուած կտրի, թա ըրխիս գիլին մոյն փորձանք ա ակալ, ալ էմ ձառքիցս պըրծանիլ չիս, սարուն ընաս երմահած։ Թու մայր քուանի դուզի, նծր ըս նահալ, նծր ա, նահալ, նծր, այ մօրդ, քիզ հիտ չիմ։

**ԳԱԼ.**—Իս ունչ գիղիս—փիա, միզ հօվան չի միր աղաթին հօվան չի—ճընապարը բօց ա ըշ-

տեղ նիզամ ա ընդեղ նօ, ձեռքը բռնուղչի կօ։  
**ԴԱՆ.**—Դէ ջօհիլ ա—կըզնըվէծ ըս, նօյ ալ տըքահած ա։

**ԳԱԼ.**—Տըքահած ա, ունչն ա բոլ միր տեղամը ցօրտ ջուրը... փի ա մա գիղիս նրո գիդահածավն բք նստելաց վիկօք։

**ԴԱՆ.**—Նծր ա նօկ գեղդան, այ տղօ Ամըրծուն, ըշտեղ ըս, ըղարկիք եաթկին։

**ԳԱԼ.**—Բո՞ւն չօնիս, կանչիման, տղին ըղարկամ քօշ օրտը, ըսկի վախիման ըշտեղ օր ընան մթնի, տօն ա գիելաց։

**ԴԱՆ.**—Ի՞մ, հւնչ ա նել նահամ՝ օր կըզնըվես վարան։

**ԳԱԼ.**—Կայնած ա թա ատ ունչ աղաթ ա, մատիլ ա մեր Ալմազա տօք միր վարժապետին, ախիր մօրդ ալ դատի ախմախ խօսքը նահիլ ա։

**ԴԱՆ.**—Դէ ալ իմ ա ախմախ, վարժապետն ալ փիս տղօ չի, ունչ իրիք օր ըստըդացի չի, նըհախ տեղը ըրխիս սարտը իմ ըս մանդրամ։

**ԳԱԼ.**—Վօյ, վօյ, դու ալ ըս գիմ, այ կընայկ, նիզամ ըս օր ըգելացաց ըորխին մասիմա դառնիք, ահին տղօ չին գիտել՝ վիր ըն կալալ ախմակը տվել նօկ դուզնը վարժապետին, խիթըդ ըշտե՞ղ ա, ալ չահիս, օր ամութ ա։ Վարժապետին, չէ, չէ... քանդիբրազի. ախիր մօրդ ալ դատի խօսկը նահիլ ա, մոյն մտածիլ չի...»

Ախապարդ ալ իմ ա եխտահաղ... աղուրդ նոկ  
գիտք նօ ունչ բռնկը քանդի:

ԴԱՆ.—Ռով է, Մկրճիտ, դու ալ անդի ա-  
լամաթ—ալամաթ խուսիլ ըս օր... նո ատի բռն  
նարիլ չի:

ԳԱԼ.—Ի՞մ, արալ ա արալ ա, նահվիլ չի գուլ  
(լսվում է դռան մուրնի ձայնը) (միասին) հեսէ  
ական, ական այ կնայկ. նօ առաջը, ական,  
փառք Աստծու:

### ԵՐԵՒՑՅԹ 5. ՆՐԱՆՔ ԵՒ ԵՐԻՑ ՊԱԶՏԻՆ

ԵՐ. Պ. (մտնում է Երից Պազտին բարկացած,  
բահը ուսին) Բարի աշնորւմ, այ Գալուստ ա-  
պար, ախիր դատի բռն ա նիլ, հոկ քանի ան-  
քամ ա օր ձիր դանան մտում ա միր տեղը, հըր-  
տանի ալ նօմ, տեսնիմ սազ մոյն շօր տընդաքըս  
լափ փըչըցահան ա, ախիր դոկ խըժմըտանք ա:

ԳԱԼ. Տինամ ըս հալա հէյլանին, աղուրդ ըն  
ահած սարի օրջ: Քանի հիտ ըմ քուռակին ահած  
քօղը հիտը տանի, դանան պայրկ կապի օր բօց  
չէլի, ամման անքամ ալ տինամ ըս դատի խալ-  
խին խայտառակամ ա էլի, ջունըդ ընան սաղ,  
Պազտի ախապար, նօ բանիտ, ատ ախմախին  
հախկին իս գիտլ ըմ, նօ բըհրեծըդ արա:

ԵՐ. Պ.—Վալլա, բէլլա, աս անքամ՝ ալ գի-  
րահան չիմ համփերիմ, բահիս կութավը անքամ  
տվեմ օր, շուն նմուն կընձկընձայքը գիձել ա

նի, ախիր հերիք ա է, անքան ա մահ էգուցը  
գուս ըս գելիս, գելիս ըս տինամ ատ անդարը  
հենէ տընդաների հախին ա, պահ, ձիր տօնը չի  
շինւի, գօնքան ալ փսաս ա նիլ օր միզ ըք տալիս:

ԳԱԼ.—Մա տեղն ա, շօտ ալ սարուն ըս ա-  
րած, օր թակած ըս:

ԵՐ. Պ.—Ախիր գիդամ չիս է, ամման ան-  
քամ մատիլ ա ուխմանի արուն հառնի, նոկ Աս-  
տուածը, թա քու պատիւը չի նայ նել, Գալուստ  
ապար, շուն նմուն ստըկցնելաց ըմ նել:

ԳԱԼ.—Ղօնչի, միամիտ կօց, ունչ ըրելի ա,  
իս նարիլ ըմ, գու նօ քու բանիդ:

ԵՐ. Պ.—Շնորհակալ ըմ, Գալուստ ապար,  
գիդամ ըմ օր ան գարդանը մանդրածը երան  
գիլուն ա նարամ: Ախիր ուռութի չի արունըս  
հառնվի, օր նատի շումալ տընդաներըս սունդ ա  
արած, ան ալ ունչ տնդաք, շալալի, նազու  
գեղձան, իրիք հատ ալ մալաչի, օր նուր ըմ նել  
փելանստ արած, ան ալ ա կարած, բան դոկ ին-  
սամֆ ա:

Գիդամ ըս էլի քեասիրին բռնը... օկրներս  
տնդէծ ըք ատ ճօրըճօյդ էգուն, թա ան ալ  
փըչահան ա, հօ դանակը վիկոլ միզ մարթա  
(լսվում է դռան մուրնը):

ԳԱԼ.—(իչ բարկացած) Զանըմ, դէ հերիք  
ըս է, նօ բանիդ, ահամ ունչ ըրելու ա՝ իս

Նարիկ ըմ, հետէ դօնակներ ըն գելիս, դաւի վախտ չի:

ԵՐ. Պ.—Դէ անումիտ զըրբուն, Գաղլուստ ապար, տղիտ սնատա, մեխիկ ըք, ձիր քաշիբն ըք (դուրս է գնում):

ՂԱՆ.—Դու ալ մա ըշտեղ քեասիբ, ախլատ կօ, մա մատիլ ա հօփ տոս, է իմ մեխիկ չին (մուրճի ձայն):

ԳԱԼ.—Սասրտ կարէ, քու բանըդդ չի, ական, նօ առաջը, ական, անպատճառ նրուք ըն նիլ (Պանարելը գնում է դիմաւորելու):

#### ԵՐԵՒԱՑԹ 6. ՆՐԱՆՔ, ԽՈՒԴԻՆ ԵՒ ԲԱՂԴԻՆ

(Մտնում են Լակրից Խուդին և Բաղդին, բարեւելով մօսենում են Պալուսին. Պանարելը ձեռքերը կրծքին ծալած զլսով բարեւում է նրանց պատասխանին, Պալուսը կիսով չափ տեղից վեր կենալով՝ բարեւում է):

ԽՈՒԴ. — Բարի աջօղում, Գաղլուստ ապար:

ԲԱՂ. — Բարով, էզնա, բարով բաջի:

ԳԱԼ. — Այ բարաւ ձիզ, բարաւ ըք ակալ:

ՂԱՆ. — Բարաւ դարփարի \*) ըք ակալ, նո՞ւր ըք, մղիյկ ըք:

ԽՈՒԴ. Փառք Ասծու, ձիր հրամանքը նո՞ւր

\*) Հաղար բարի:

ըք, ծղուլ-ուշաղավ, օվլադավ, դօվլաթավ, աղիյկ ըք:

ԳԱԼ.—Փառք Ասծու, դիփ ալ աղիյկ ըք, դօնշի Խուդի, համեցիբ, զըրշակին նստէ, ախճի, մոյն դօշակ ալ բրահիբ դօնշի Խուդի հատի, օր փափուկ ընայ:

ԽՈՒԴ. — Այ նւնչ հարկաւոր ա, հեսէ դօշակ ալ էլի, փափուկ ա նստիլ ըմ:

ԳԱԼ.—Դէ աղիյկ, համեցիբ, նստէ հրտեղ, դէ Բաղդի հատի ալ մոյն ըսկամի բրահիբ (Պանարելը ուզում է գնալ):

ԲԱՂ. — Այ բաջի, դէ հերիք ըս է, իս բիրիլ ըմ էլի, մա դիդիս ըսկամուն տեղը զիդամ չիմ (մտնում է միւս սենեակը):

ԳԱԼ.— Այ կնայկ, դէ չայի, մազի թաղրաք տահիբ, է, դօնշի Խուդի, ալ նո՞ւր ըք, քեփըներդդ, հալրներդդ, փառք Ասծու, աղիյկ ըք:

ԽՈՒԴ. — Փառք Ասծու, աղիյկ ըք, ձիր մատիլ ալ հրցանիբ, դո՞ւք նո՞ւր ըք:

ԲԱՂ. — (բերելով արոռը) Հօկ ալ էմ ըսկամիս (դնում է եւ նստում):

ԳԱԼ.— Ռուրիշ, շօտ վախտ ա օր ակած ըս, երբէ ըմ լսել հրամանոցդ գուլը, քարվաններդ միծ ա նել, մւկքար ըն նել ձիր հինդիբները... Ախչի, չայ բրահիբ, դէ հա...

ԽՈՒԴ. — Նեղութիւն մաք քաշիկ, Գաղլուստ ապար, շնորհակալ ըք:

**ԳԱԼ.** — Ունչ նեղութիւն, շնորհակալըս մւռն ա, Ալմազ, շնուտ ըրահիք, ունչ կօ բրահիք (Ղանաքել գնում է միւս սենեակը) — հօ, ահաս ուվ ա նել ձիր քեարվանամը:

**ԽՈՒԴ.** — Քեարվաններս անքան ալ միծ չի նել — չուրք հէզիյ ըքնել՝ գլշտացի Սարդարաց Ստեփան ա նել, Փանից Շմամուն, Եարվելից Գեվէրք, մոյն ալ իս:

**ԳԱԼ.** — Սարդարաց տղան ակալ ա, ատ աղիյկ ա էլալ, թա չէ հայրը շօտ ա ընդիէծ:

**ԽՈՒԴ.** — Հրամել ըս, ակալ ա, մա հօր ուջի ա ակալ, թա չէ հրդօ գործի փիս վախտն ա նել:

**ԳԱԼ.** — Ետով, նո՞ւր ըք տեղ հըսահալ, հաւօն սարռն ա նել:

**ԽՈՒԴ.** — Քեափիրըս ունչ տինի, իւչ թափալարամը պղուտի ա նել մնահած միր Փանի տղան — Շմամուն պղոսնի, աղբաթը — խայը դշտացնւն ընան, միր չարվադարին, օր ատ արկուսը չի նան նել՝ լափի ձառքից դժւս ա նել գելաց ատ խեղճ հէյվունը.

**ԲԱՂ.** — Նո՞ւր, բաս էնձ իմ չիս պատմած:

**ԽՈՒԴ.** — Բաս, լափ սրուոհած ա նել, մոյնը՝ ձեռաց արկու թօս արաղ ա ածալ բողազը, գլշտացին ուտը ձէոքը ձնւնավ հարամ ա նել, մոյն ալ տինիք սկսել ա եիտ գու:

**ԳԱԼ.** — Աստուած հառի տանի ըտեղու քամին, բօրան ա նել:

**ԽՈՒԴ.** — Բաս ունչ ա, թա սիսեանցի չարգագորը չի նա նել, ճընապարներս ալ ըք նել կըրցնելաց, ուվ ա դիդամ դիփ ալ սըռընըտելաց ըք նել:

**ԳԱԼ.** — Մոյն ատի քօրանի ալ ուժանսուն թվին միք ըք ուստ ակալ Ղափանտմը, ան ալ մա հոկ փետրվար տմախն, պահօ, դիամաթ ա նել, դիամաթ:

**ԵՐԵՒՈՅԹ 7. ՆՐԱՆՔ, ԱԼՄԱԶԸ ԵՒ ՂԱՆԱԹԵԼԸ**

(Ալմազը մտնում է մատուցարանով քէյը ձեռքին, դնում է քախտի վրայ և զլուխ տալով բարեւում է. Ղանաքելն էլ մօտենում է իր եղրօրը):

**ԳԱԼ.** — Դրէ ըստեղ, մաշտեղ, դատի վիկոլ, զօնշի Խուդի, վիկոլ հոկ ստաքանը, աօ թունդ ա... բաս իս ձիր տահած բօրանը ահիմ թա ներսուց շալըճին, օր արկու շալքաթ ա ծաղկած ա:

**ԽՈՒԴ.** — Այ քիշի, ատի բուն չի նիլ, հոկ վախտըս շրպըճի ա նիլ ծաղկած:

**ԲԱՂ.** — Ի՞մ, Էզնա, հազըր միրը թուղ ըս արած նէրսսուցըն ըս նահամ, միրը հալա մոյն արկու օր ալ առաջ ա նել ծաղկած նրուցին հանից:

**ՂԱՆ.** — (Հիւրասիրելով) Այ համեցէք է, շա-

քար գիձահիք է, զօնշի Խուղի, Բաղդի զիւ-  
ձահիք, ըստեղ ալ խօ կծնվի չիք խմելաց:

ԽՈՒԴԻ. — Շնորակալ ըք, բաջի, ըսկի գիձելու  
սովորութիւն չօնիմ:

ԳԱԼ. — (Ինձը զցելով Խուղու բաժակը) Այ  
դէ թուղ տինիմ ունչ ըմ նարամ է; (Խուղին  
արգելում է) մոյն անուշ արա, տիս ունչ չայ, ան,  
Պօպով ա; ան ալ դիլհաւուր տեսակիցը, օթ  
աբըսանուց:

ԽՈՒԴԻ. — (Համը տեսնելով) Շօտ համավ չայ ա,  
հրդօ կախամըն ալ ըն սկսէծ Պօպով բընըցնիլ;  
առաչ ային օյին չայար շօտ ա նել:

ԳԱԼ. — Այ դօկ սուխարին ալ վիկօլ է, լափ  
թօգայ ա, Բարխուդարաց տղարքը նուր ըն բի-  
րիլ սվէծ Քաղքիցը, Եաշչիկը իս ըմ բօց արիլ  
սովել:

ԽՈՒԴԻ. — Աղուրդ, զրուք նուր ըն, մղիկ ըն:

ԳԱԼ. — Շօտ խօգամ ըն, դուքանները օր  
տինիս քէփդ գուլ ա, ամման բուն ալ օնին,  
ունչ ահիս, հրդօ վիդամ ըս, զօնշի, ընչում ըն  
նրուք սարուն փուղ դադամ, դօկ մօղնի ըպրան-  
քամը, միր դօկի կնանաց ալ խօ ճնընչելիս ըս,  
օր սուտի բրախ տօս, քաղքցուց հանի ալ  
սլայրկ ըն փխօնիլ: Այ համեցէք է — սուխարի  
անուշ ըրահիք է:

ԽՈՒԴԻ. Ռւրեմն մօղնի սալրանք ալ ըն պահամ  
Բարխուդարաք, Բաջրաքաղաք, Պօչըրալլա, Պօչչաղ ըն, ախալար:

ԲԱՂ. — Աղուրդ, Խուղի, ունչ աղիյկ ա  
մայսու ալ ընգիէլ, նօկ շամախեցի քօռ հայը,  
ունչ ալ նրօ անումը:

ԽՈՒԴԻ. — Նօկ քօռ Բաջրալը...

ԲԱՂ. — Հօ, հօ քօռ Բաջրալը անդի ա, հալա  
սաղ ա. — շուն տղօյ ա նել հա, նրօ վիզը չի  
մանդրի, մայտըտ ալ մոյն հիտ ուստի ալ խարալ  
նօկ խեղճ ենգիլօվին:

ԽՈՒԴԻ. — Ատ ուսուն ըս նահամ է, նօկ նօթի  
նաղլը:

ԲԱՂ. — Հօ, ատ մա շօտ սարուն ա, պատ-  
մա բաջին ալ լսի, էղնան ալ, բօլ ծըծառ  
դիլ ըն:

ԽՈՒԴԻ. — Հըվատաս դիվի ալ լսէծ ընան ատ  
նաղլը, շօտ ա յայտնի:

ԳԱԼ. — Զէ, լսէծ չիմ, ատ ունչ նաղլ ա, ա-  
հա տինիք:

ԽՈՒԴԻ. — Հատի ա նելամ էլի — մոյն օր մոյն  
ենգիլով ա դիելիս ատ Բաջրալայ կէշտը, մոյն քօ-  
թուլ կանեակ նիզամ, սօ մտածամ ա թա ենգի-  
լովը ունչ ա հասկանամ կանեակը ունչ ա, փըր-  
քաշիկին հրամայամ ալ մոյն քօթուլ նօթ ածին,  
պնդանը պայրկ դրին, բիրին, տղան ալ քօթուլը  
սարուն թխտում պլտատամ ա, բիրամ տպիս  
ատ խեղճ հէյվանին չուրք մանէթը հինք նատամ:

ՂԱՆ. — Եանի ատ նուր ինսափ ա, այ զօնշի  
Խուղի, է իմ, մեխի չի:

ԳԱԼ.—Ետով, Ետով, կայնի տինիք մւնչ անհամ է:

ԽՈՒԴ.—Ետով, արկու շաբաթ չի եխնց կալիս, այ տղօ, մոյն ալ տահաք համին մա ան ենդիլովը, թվանդը եօնսին ձիյը քշել ա ակալ բըզարին մաշտեղամը կայնալ, հարայ տվել... նծը ա նօկ առվագաքարը... անումը մայտը չի.... Դէ անա բըզարամը զիփ ալ զլուհ ըն ընդիէլ թա բունը ընչումն ա, ահան այ տղարք, հետէ խաթօյ ա ըլելաց, անսաս ունման ըն ըզարկալ շամախեցիք, օր Բաղակ գաղվի, ըզօրմածնոգի Օրջ Նըւասարդ անումով մոյն օդաբաշի ա նել — մայտը ա գիւլ, Գաղուստ ապար, մոյն ազօմօրդ, բօյավ ուհման ա նել, ինքն ալ շօտ սրտով:

ԳԱԼ.—Ռւճչպէս չի, մայտը ա, Ետով:

ՂԱՆ.—Այ համեցէք է, զօնշի, չայրդ հըզահալ ա է:

ԽՈՒԴ.—Հօկ սըհաթիս, բաջի: Հօ, ատ Օրջ Նվասարդը մէյլուն ա զուս ակալ ենդիլովի ձիու լնւգանիցը բռնել, սկսել հըրցանի՝ հը խայր ընան, զօնաղ, ունչ կօ, իմ ըս կըզնըզէծ, վէր իկ ձիուցը, պուտի տըզահի, արաղ անուշ արա, նրուք ալ խօ արաղի հիտ շօտ ըն նելանմ դօսա, բաջի, ատ ենդիլօվը քի՛ չէ, նծը ա քու գուքանչին, իս նրօ հիտ բուն օնիմ, մատիլ ա տինիմ, վերջապէս ունչ զլուհներդ ցըզցանիմ, սօ ահի, նօ ահի, բանից զուս ա գելիս օր ենդիլօվի

կնայկը հիւանդ ա էլած, ակած ըն էլած կանեակ առին, խեղճին կանեակի տեղ նօթ ըն տալիս, նրուք ալ տանամ ըն նօթն ըն խըմըցանամ հիւանդին, դէ հէյվունները էրբաց ըն կանեակի հում տահած օր զիդին: Մւնչ ըս նահիլ օր հիւանդը չուրք օրամբ առոխճանամ ա ատնի կայնամ: Մօրդն ալ ըրխըթանից քու Բաղակալա հատի վիր ա կալամ մոյն շան մեզը, իրիք գիրվանքա էղ, պը կու հատ ալ զըրդօվուլ բիրամ վէշքէշ: (Բոլորը ծիծաղում են) հահահա: (Վերջացնում են թէյը):

ԳԱԼ.—Հա... հա... պահ, քու վիզըդ չի մանդրպի, Բաղակալ, գահար ալ զարափաթ, հա... հա...

ԲԱՂ.—Դունքո բախտը տիս է... հա... հա...

ԳԱԼ.—Թամում էշի բախտ ա, էլի, հա... հա... ախճի ըշտեղ ըք, արաղ, մազա բըահիք, վախտ ա:

ԲԱՂ.—Այ գիդի կախը, ամա զարափաթ-

ներ ըք նել նարիլ է: Աս ենդիլօվսիըն ալ շօտ հէյվուն խալիս ըն հա: (բերում են արադը, մազան եւ այլն):

ԽՈՒԴ.—Ունչիրիս օր հալալ ըն, դրուք ալ, լաղգիքն ալ շօտ հալալ ըն, հայից տըմնըպատիկ հալալ ըն, դրուց տվէծ նիսիան ըսկի կըօնիլ չի, ապար, ասար տօսաը հըզարից իւիլ նիսիա օնիմ նրուց վարան, ըսկի վեջիս չի, գիդամ ըմ օր կըօնիլ չի, սօմա հայի վարան իրիք հըզօր էլած տեղը քունս տանիլ չի:

**ԳԱԼ.**—(ածելով արար) Համեցէք, մոյն թօս արագ անուշ ըրահիք, դօնշի, համեցէք, Բաղդի:

**ԽՈՒԴԻ.**—(Վերցնելով բաժակը) Գայլուսա ապար, Աստուած օջազներդ հաստատ պահի, տօննըներդ ալ լիքը, Աստուած բոլորիդ ալ աչողակ, բախտաւոր պահի, (գլուխ է տալիս Ղանաթէլին) բաջի, Աստուած ձիր որթիքն ալ պայծառ պահի, Նրուց ալ անթառամ փսակին արժանացնի, օրդուք ալ տինիք ըրխանիք (խմում է) բրր... աղուրդ ձիր մեծ տղան ըշտեղ ալ, հըրդօ եյկքա տղօյ ալ մատամ նայ դառնած:

**ԳԱԼ.**—Հրամել ըս, ունչպէս չի, աս տարի ալ Թիֆլիզ Ներսեսեանը աւարտալ ակալ տօն, ամա ըսկի տուն դադար չի նարամ, սաղ օրը դէսը դին ալ վըզվղալիս (Վերցնելով իր բաժակը) է, դօնշի Խուդի, ձիր պայծառութիւնը, բարաւ զարփարի ըք ակած, Աստուած պայծառ պահի, բախտաւոր պահի, միք ալ լսիք՝ ըրխանիք: Ձիդ ալ մօյն հալալ կըթնակիրի ըրժընցանի, օր ըրխաքն ալ եթիմ չի մնօն, է, նահպիլ չի, աշխարք ա, աղուրդ ա դժօր ալ, ամա առանց օղըշաղի տօն չի եօլա նօլ: է, Բաղդի, սաղ ընաք, աչողակ, այ կնայկ, Աստուած քու սրտիտ ըզանածըն ալ քիզ տօ: Տէք Աստուած, հալքամթ միզ ալ մոյն եօն ըս նարիլ (խմում է): Ուխիայ, ունչ արագ ալ, կանեակ ա, կանեակ: Այ դէ հաղոււ

վիկօլ է, ախնամ ըս միր քէյվանին ուռատի ա չանգալին պահած, մահ ա թողայ ընան ուրթիցը նուր կարէծ, անուշ արա, դօնշի Խուդի, (բաժակը ածելով առաջարկում է Բաղդուն) —Բաղդի, համեցէք:

**ԲԱՂԴԻ.**—(Վերցնելով բաժակը) Սաղ ընաք օրախ, Խուդի, գալուսալդ բարի, բարաւ ըս ակած:

**ԶԱՆ.**—Այ ապար, դէ մօյն սարուն վիկօլ է, ծամծամ մանն նարիլ:

**ԳԱԼ.**—Հօ, ան ըմ նել նիզամ հըրցանիմ, միր Մուխսին նո՞ւր ար Մուխսին ալ առաջվայ նըմուն ամառը տաք քուրքը սկանամ ալ դըքանամը նսառում:

**ԽՈՒԴԻ.**—Մահ ուրտի օր թուղ ըս արած քսառւն տարի սրո հանից առաջ, անդի ալ հրդօյ ալ, ըսկի փահւած չի:

**ԳԱԼ.**—Տղարքը ըշտեղ ըն, կըշակն ըն, մաղիյկ ըն:

**ԽՈՒԴԻ.**—Մոյնը կշտին ալ, սարուն ալ, հօրը քօմադ ալ նարամ, ամա միծիցը փայտա չի կօ, փօչ ալ դուս ակալ անումը վարան Մօսկով հօր հատի խրիդ ա նարամ, ամա, խօսկը միր մաջին մնօյ, նահամ ըն շօտ փարթամ նստիլ վիկօլ օնի:

**ԲԱՂԴԻ.**—Աս ուռն ա է, ան ուսում առածը:

**ԽՈՒԴԻ.**—Հրամել ըս, մա ատ ուսումը չի նրօ տօնը քանդուղը:

ԴԱՆ. — Այ հերիք ան, ունչքան խըսըցահաս  
է, թուղ մոյն պուտի մաղա անուշ արին:

ԽՈՒԴԻ. — Զահմանթթ մաք քաշիլ, բաջի, նօտամ  
ըմ էիլ:

ԳԱԼ. — (Համեցէք անելով) Անուշ ըրահիք,  
այ ինայկ, իմ չիս դոկ ինձնուրը քըչավամ, քը-  
չավա, զօնշին նօտիլ ա... Զէ, դիփ հայրն ա  
մեղաւոր, ախիր մօրդ վիր ա կալիլ տղին դատի  
ջօհիլ տեղավը ըզարկիլ Մօսկով խրըդի, ան ալ  
ըշանեղ — Մօսկով, զէ ան ա փչանիլ ա, բաս ունչ  
ա նէլիլ:

ԽՈՒԴԻ. — Դրսւստն ահած, շօտ մեխկս ա ակալ  
ան օրին, լօց ըլելավ ա նել պատմամ... Արկու-  
տարամը օթ հըզօր մանէթ ա խարջած:

ԲԱՂ. — Մաղամ տա ունչքան փուղ ա մա-  
տամ, օր դոկ խարջին դըմանի: Ըսկի փուղ ա  
դըմանիլ:

ԳԱԼ. — Գիգամ չիմ հըրտատան ջօհիները  
ունչ ըն մտածամ, վալահ, բիլահ, ձեքըներավը  
ըսկի մոյն բնեն չի գելիս, ամա օր փուղ ա ըն-  
գանամ ձեքները՝ անդի մոյն խժուռմ ըն օր ա-  
հիս թա փուղի թշնամի ընան: Ըսկի փուղի դա-  
դիր չին դիգամ: Ըղօրմածհոդի ափիս ա նել  
միշտ նահիլ. փուղին դադիրը հիմընահիք, թա  
չէ եաթին դուշ ա քաշւած, մոյն ալ տահար  
հայդէ թոել ա նահանլ:

ԲԱՂ. — Ալ նահամ ըս թուղ արիս, հենէք մոյն  
ատինըն ալ Մելիք Շանապարայ տղան չի:

ԳԱԼ. — Իլաքիմ ատ վիզը մանդրածը, հօրը  
դօլաթը սաղ դաղաթմիշ ա արալ նահանլ:

ԲԱՆ. — Բաս նահիլ ըն նել, թօփ ալ գու-  
նրուց քար չի նարիլ, ուռուի ա օր աղան կարալ  
ա պրծըցահալ, այ միզ ունչ է, խնամի, մաղա  
անուշ ըրահիք:

ԲԱՂ. — Գիդամ ըս, բաջի, իս չի նամ նել,  
Խուղի հըվատաս դարի ունչ նել տեղ հըսանի,  
անքան ճընըպարին քշքատուղ ա նել, չոլ ըն  
նելամ օր տանին եիրաց տուն, թուղ չիմ արալ:

ՂԱՆ. — Ատ նո՞ւր ա նելիլ օր հայն զօնշու-  
տօնը թուղ արի նօ ուրիշի մօտ:

ԽՈՒԴԻ. — Ան ա միր տեղի աղաթը գիդամ  
ըս ալու, բաջի, զըրըըթանից ակածին թուղ ըն  
նարիլ օր հանգիստ տեղամը նստայ, ան ալ հօկ  
այզիզ օրարըս, մոյն տեղ կըրծ ա, մոյն տեղ  
մաթա աղաձու, մոյնին մօտ կլօլակ, մոյն ու-  
րիշի մօտ քշքափած, ուհման ըս, զէ իկ դըման-  
ի: (Պանարէլը մարդու ականցին փսփառմ է):

ԳԱԼ. — Այ աղարք, աղուրդ նուր ըք մոյն  
մեղայ աղաձուի հիտ քշքափ, քշքափ, լաղաթ  
ա տոլ, հը, նօր ա Ալմազ, ըշտեղ ըս, զէ շուտ  
ըրանիք:

ԽՈՒԴԻ. — Այ ապար, ունչ աղաձուի վախտ ա,  
չէ շնօրակալ ըք, նելիս ըք, նելիս, Բաղդի

նօք (լանգնելով) հօկքան ալ պատիւ ա նիւ ջա-  
նըմ, չէ, բաջի, շնօրսկալ ըք:

ԲԱԼ.—(Նստած): Դէ, աղիյի, մոյն աղաձնու  
ալ օտիք նել ետօվ:

ԳԱԼ.—Աֆքալիմ Բաղդի, դրուստ ա նահամ  
(դառնալով կիոչը) հալա կմանած ըք:

ԽՈՒԴ.—Զէ, չէ ապար, նելիս ըք, Բաղդի,  
է իմ լսել չիս օր պտոյզուն խօստահամ, չէ,  
մատիլ ա նօք, նօք, նօք:

ԴԱՆ.—Այ խնամի, դէ մնահիք նել, հօկ  
որհաթս մա պատրաստ ա նիւ: (Բաղդին կանգ-  
նում է):

ԽՈՒԴ.—Զէ, բաջի, չէ, պտոյզիս նըզանիլ  
ա, ամութ ա, էն, մնացիք բարան շնօրհակալ ըմ:

ԳԱԼ.—Իս ձիդ ունչ ահիմ, օր աստի տեղը  
թուղ արած՝ նելիս ըք: Դէ օր մնալիս չիք՝ բարի  
ճընապար, դէ դօնշի, աս էլալ չի, մատիլ ա գնւս,  
խըսելու բանար շօտ ա մնահալ:

ԽՈՒԴ.—Այ դէ բան ունչ ա, հալա մոյն ալ ըք  
գնւլ, արկու ալ ըք գնւլ մնացիք բարան:

ԳԱԼ.—Է՛ բարան ըք տահալ, նօք բարի:

### ԵՐԵՒՈՅՑԹ 8. ԳԱԼՈՒՍՏԸ ԵՒ ԴԱՆԱԹԵԼ

ԴԱՆ.—Մարթավարի մօրդ ա ելած:

ԳԱԼ.—Բաս օրնահամ ըմ—լսէս տօսուը հըզա-  
րի նիսիտ օնի ենդիլօմիների ընան լաղիների վա-

րան, ըոկի վեջամը չի, ատքան օր նիսիայ ա,  
մոյն արկու, իրիք ատքան ալ չէ օր նաղդ ա  
նիւ:

ԴԱՆ.—Ըոկի անքան ալ հըլաւուը չի նըր-  
վահալ ակնամըս, ամա, տահան եթիմների անումը  
օր տվէս՝ ըրտասւալ ա, Ալմազ, նօր ըս, իկ հօկ  
հատուք կամաց, կամաց հըվաքա, զօնաղները  
նահան (Ալմազը մենում է սկսում է հաւատել):

### ԵՐԵՒՈՅՑԹ 9. ՆՐԱՆՔ ԵՒ ԲԱԼՈՍԱՆՆՀ

ԲԱԼ.—Բարի լուս, ապար, բարով հօրոր:

ԳԱԼ.—Բարան ըս ակալ բարով, հը՝ նո՞ւր ըս:

ԲԱԼ.—Աս ունչ ա է, մւնչ ա տուն պա-  
տահած օր ըխալըրվերդիս եանքարը տվէծ վարան  
ակալ ա մօրըս, քիզանից ա նել զինզաւուամ  
(դառնալով դէպի եղրօրը) է, աղիյի, միմիկ չի,  
իմ ըք սրախն կպում, ճօրը ճրօյդ մոյն տղօյ  
օնիք, սարալ նօ՞ր ըք մանղրամ:

ԴԱՆ.—Դէ մա իս ալ մտ չիմ նահամ, իս  
էմ հնդիս:

ԳԱԼ.—Այ բաջի, հերիք ըս, ուկ ա նրօ-  
դամախին կպէծ: Եօկ կակըից Խուդիյ իմ նել  
կանչած, գիդամ ըս էլի, ատուր ուջի սկսել ա  
գէսից զինից, թւաբանութիւն, գիդիլ չիս քերա-  
կանութիւն, գարգանկ մարտակ գնւս տվել բօրը-  
թի նմուն փըրթփըրթահալ, դո՞ւս ակալ նահան:

ԴԱՆ.—Ետօվ, բաջի, ըշտեղ ա՛ նահալ:  
ԲԱԼ.—Մա հըտեղանց մտել ա՛, նըտեղանց  
դուս ակալ, ահալ ա՛ նելիս ըմ ըշկոլը, վարժա-  
պետին մօտ:

ԳԱԼ.—Վալահ, բիլահ, ահած ցօրտ խոս-  
կըս մա հօկ ա՛ նել թա՛ թողա հաւար ըն դուս  
սկած ըրծաթա ձւանք ըն գիծում:

ԲԱԼ.—Ետով ուրտի ա՛ էլալ, թաղրաքից  
ախամ ըմ օր ակած ըն էլած:

ԴԱՆ.—Մա հօկ ա՛, բաջի, գուս ըն ակալ,  
նո՞ւր ա՛ օր տահած չիս, ախառուըս հիս ըն նել:

ԲԱՂ.—Հալբաթ նըտոք քօշանց ըն նահած,  
իս սուրբ Քրիստափօրի հայաթավրն ըմ ակալ,  
ահամ մտամ մոյն դուրքը համփերիմ:

ԳԱԼ.—Շօտ երեելի մօրդ ա՛, ամա տինիք  
ունչ խրեր ա՛ բիրամ միր Բաղդի, հրդո ըշտեղ օր  
ընայ՝ եիտ ա՛ գուլ. դէ իս յիմար չիմ օր ամման  
ուհմանի ախճիկ տօմ. մինչնա տօսուը հիտ չափիմ  
ունչ, մոյն հիտ կարիլ չիմ:

ԴԱՆ.—Ամա պուտի օր նօկ եթիմները կօն,  
ան ա՛ էմ սարտըս նըղղանամ, ունչքան չի  
նան դժօր ա՛, եղաւց մըկէլ օրը եիրան ալ ըն  
ըրխաք ըլելաց, նո՞ւր ա՛ ըրխաս գիրելաց եօլա  
տանի:

ԲԱԼ.—Այ հօրար, ատ ընչերից ըս խըսելիս  
է, գու ահա մաշտեղ բո՞ւն զլուհ գու:

ԳԱԼ.—Հալբաթ քի:

ԲԱԼ.—Դու ահա ըխճըկուս բախար մույն  
բօց էլի, աս պըրկինդան օրարըս մայն ըրխա-  
նիյք, նալլրավ զնունօվ տոշտ գրիյք, թա՛ չէ  
մահածըլ ուստի բռնիս, բուն ա՛, եօլայ ա՛ նոլ:

ԳԱԼ.—Հալբաթ քի:

ԴԱՆ.—Դէ իս ունչ ըմ նահամ, նոկքան ա-  
րազը ում հատիյ ըմ նել տինամ, դէ ըրխիս հա-  
տի ա՛ ալու...

ԵՐԵՒՈՅԹ 10 ՆՐԱՆՔ ԵԽ ԲԱՂԻԻՆ (ուրախ  
մՏնիլով):

ԳԱԼ.—Հը նո՞ւր ըս, տղօյ թա՛ ախճիկ:

ԲԱՂ.—Դէ, էզնա, բաջի, մըշտղըս տվա-  
հիք, Աստուած շնաւուր արի:

ԴԱՆ.—Մանիմ Ասծու սուրբ գօրութեանը,  
ահա ախճիք ուռտի ա՛ էլալ:

ԲԱՂ.—Մա հըտեղանց դուս ըք ակալ թա՛  
չէ, իս սկսեմ զավալ, նօ ահալ ա՛ իս զավամ,  
նօ հրցահալ ա՛ իս զավամ, ախնիմ կակուղ ա՛.  
անա վերչամը ահամ նիղամ ըս, Խուզի, բունը  
զըղղանիմ, ունչ ըս տօլ օր շինիմ, նօ քի՛ քի՛  
հատի մոյն սարուն խալաթ ակնիս վաղան, ահամ  
ամա մատիլ ա՛ աս պըրկինդան հըսանիքը օտիք  
հա, նօ՛ քի ունչքան շնուտ՝ անքան աղիյկ:

ԳԱԼ.—Դէ գործի տայը մօրդ ա՛, գարիլ չի  
իս ամիսներավ ըստեղ վեր ընդանիլ իս նահամ

բա՞մա առաջուց վճռւէծ բան ան, կախամըն  
ընիլ աղարքը ահած:

ԲԱԼ.—Շօտ կարելի ան մա միր Մուխսին  
ընայ թափշուր արած:

ԲԱՂ. Մոյն խասկավ հօգուց չէ մըկէլ օրը  
մատիլ ան փանկանչ արած:

ԴԱՆ. —Ակնիս վարանն, Տէր Աստուած, զօ-  
րութեանդ մատաղ, ըոծակի տեղ դառն ըմ մըր-  
թելաց, այ սուրբ Օկանէս:

ԳԱԼ.—Իս համաձայն ըմ, կնչանիք մըկէլ  
օրը, Տէր Աստուած դօւ քու օրթնութիւնը ըբ-  
խիցըս անպակաս արիս. Այ կնայկ, օկըդ լուս,  
ախճիկներս բախտաւորւալ ա:

ԴԱՆ. —Քունն ալ ընան լուս, տա՞հաս արագըս,  
գա՞ռն ըմ մատաղ ըրելաց, գա՞ռն... այ  
ախպար, քիզանից շնորհակալ ըմ օր քիզանավ  
ան ըրիսս բաղտաւորւալ:

ԲԱՂ.—Այ ախպար, քու օկըտ ալ ընան լուս  
իկ իս ալ քիզ սլաչիմ, օր դատի բախտաւորւաք,  
հօրսը, Աստուած շնաւուր արի, բարձր կանաչ  
կարմիրը կապին, մոյն բարձի ալբանան, նօր ա  
Ալմազ, նօմ մոյն շընըւարիմ: (Նկատելով Ալմա-  
զին, ձեռքից բռնում է եւ ժառում նիրս: Մը-  
նում է Մկրտիչը):

## ԵՐԵՒՈՅԹ 11. ՆՐԱՆՔ ԵԿ ՄԿՐՏԻՉԸ

ԴԱՆ. (Վազելով դէպի նրան) Մկրճիտ ջան,

բալաս, օկըդ լուս, կակըից Խուդի քու բաջի նշ...

ՄԿՐ.—(բարձր) Ունիչ ան, դատի շուտ,  
բան վարժապետը... իս ձիր խըճմըտանքին ունիչ  
ահիմ, խեղճ էմ քոյր, խեղճ էմ Ալմազ...

ՎԱՐՍԳՈՅՑՐԸ ԻԶՆՈՒՄ Է





ՀՀ Ազգային գրադարան



NL0339520

29008

q. p. 66. L 50 100.